

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ես՝ Միշա Ստեփանի Խուդավերդյանս, 2021 թվականի սեպտեմբերի 22-ից մինչև 2022 թվականի փետրվարի 1-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Կազմել և ՀՀ ՄԻՊ աշխատակազմ եմ ներկայացրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման և զեկույցի կազմման համար ՀՀ արդարադատության նախարարության տիրապետման տակ գտնվող անհրաժեշտ տեղեկատվությունը:

2. Մասնակցել եմ, 2019 թվականի նոյեմբերի 1-ին մեկնարկած ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի առաջնահերթություն հանդիսացող միջոցառումների թիրախավորման աշխատանքներին և օժանդակել ծրագրի իրականացմանը:

3. Համակարգել և իրականացրել եմ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-Լ որոշումից բխող շուրջ 20 միջոցառումների կատարումը:

4. Մշակել և շրջանառել եմ «Հիմնական աշխատանքի վայրից դուրս աշխատանքներ կատարելու համար պրոբացիայի ծառայողների կողմից կատարված տրանսպորտային ծախսերի փոխհատուցման տրամադրման դեպքերը, կարգը,

առավելագույն չափն ու ժամկետը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

5. Մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծի ընդունմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշմամբ սահմանված որպես խափանման միջոց ընտրված կալանքը կամ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների (խանգարումներ, վիճակներ) կողմնորոշիչ ցանկում առկա հիվանդությունները համապատասխանեցվել են հիվանդությունների տասներորդ վերանայված միջազգային դասակարգչի (ՀՄԴ-10) արդի զրագացման միտումներին:

6. Մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում դադարեցվել է ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը:

7. Մշակել և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն եմ ներկայացրել «Քրեակատարողական նոր հիմնարկի կառուցում և հետագա շահագործում» վերտառությամբ ներդրումային ծրագրի նախագիծը:

8. Մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 1514-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում սահմանափակվել է **ազատությունից զրկված անձանց հետ անմիջական շփումները՝ տեսակցությունները՝ սահմանափակումը չտարածելով միայն օրենսդրությամբ սահմանված իրավասու անձանց և մարմինների վրա:**

9. Մշակել եմ ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի նոյեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը դադարեցման աշխատանքներն իրականացնելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» N 566-Ա հրամանը: Միաժամականակ ընդգրկվել եմ հանձնաժողովի կազմում և իրականացրել անհրաժեշտ աշխատանքներ:

10. Մշակել և շրջանառել եմ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

11. Մշակել և շրջանառել եմ «Քրեակատարողական ծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու և քրեակատարողական ծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման կամ բնակելի տան կառուցման նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունման արդյունքում կապահովվի քրեակատարողական ծառայողների բնակարանային խնդիրների լուծումը՝ այդպիսով բարձրացնելով նրանց տրամադրվող սոցիալական երաշխիքների մակարդակը:

12. Մշակել և շրջանառել եմ «Գույք հանձնելու և ընդունելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկին ամրակցված՝ Արագածոտնի մարզի Կոշ համայնքում գտնվող 13,3845 հա մակերեսով հողամասը և դրա վրա գտնվող ընդհանուր 30,378.95 քմ մակերեսով շենքերը ու շինությունները և ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկին ամրակցված՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան 45 հասցեում գտնվող 0,3429 հա մակերեսով հողամասը և դրա վրա գտնվող ընդհանուր 3074,3 քմ մակերեսով շենքերն ու շինությունները, այդ թվում՝ դրանց

պահպանությունը, հանձնվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին, իսկ հիմնարկների շարժական գույքը, այդ թվում՝ հատուկ տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցները, տնտեսական և կենցաղային իրերը, զենքը, ռազմամթերքը և հատուկ միջոցները հանձնվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության տնօրինմանը:

13. Մշակել և շրջանառել են «Հողատարածք հետ վերցնելու և ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության հաշվեկշռում գտնվող ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նոնաձոր գյուղում գտնվող 09-066-0112-0002, 09-066-0118-0001, 09-066-0131-0001, 09-066-0139-0003, 09-066-0139-0004 և 09-066-0140-0001 կադաստրային ծածկագրերով ընդհանուր 147,918 հեկտար մակերեսով հողատարածքն ամրացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

14. Մշակել և շրջանառել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի N 896-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի համար սահմանել խմելու ջրի, ջրահեռացման, բնական գազի և էլեկտրաէներգիայի ծախսման առանձին սահմանաչափեր, որոնք տարանջատված կլինեն ազատությունից զրկված անձանց համար նախատեսված նորմաներից և սահմանաչափերից:

15. Համակարգել են քրեակատարողական նոր հիմնարկի կառուցման աշխատանքները:

### **Հարկանշական այլ գործողություններ**

Հաշվետու ժամանակահատվածում կատարել են նաև հետևյալ աշխատանքները.

➤ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված հրատապ, ընթացիկ և տարեկան հաշվետվություններին ի պատասխան ներկայացրել են ՀՀ ԱՆ պաշտոնական շուրջ 10 մեկնաբանություններ:

➤ Կազմել են ՀՀ արդարադատության նախարարության ուղղված գրությունների 30 պատասխան նախագիծ:

➤ Պատասխանել են տեղեկության տրամադրման հարցման 10 գրությունների և այլն:

### **ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ  
ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ՝**



**ՄԻՇԱ ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ**